

ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N° 2

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2020-2021 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

19 նոյեմբերի 2020թ.

Ներկային՝ գիտխորհրդի 20 անդամներից 18-ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սաղյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի առկա ասպիրանտ Անուշ Արմենի Ոսկանյանի՝ ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ և «Հայաստանի Հանրապետությունում դեղատնային գործունեության կատարելագործման մեխանիզմների գիտական հիմնավորումների մշակումը» վերնագրով թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական դեկավարի հաստատման հարցը:
2. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտից լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակիցների առաջադրման հարցը:
3. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ և ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի առկա ասպիրանտ Անուշ Արմենի Ոսկանյանի՝ ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ և «Հայաստանի Հանրապետությունում դեղատնային գործունեության կատարելագործման մեխանիզմների գիտական հիմնավորումների մշակումը» վերնագրով

թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

Լսեցին՝ Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի ասիստենտ, դ.գ.թ. Ալբերտ Եփրեմի Սահակյանին, ով ներկայացրեց Անուշ Ոսկանյանի ատենախոսական աշխատանքի շրջանակներում նախատեսվող հետազոտությունները՝ շեշտելով, որ դրանք ուղղված կլինեն Հայաստանի Հանրապետությունում դեղատնային գործունեության կատարելագործման մեխանիզմների գիտական հիմնավորումների մշակումը, որոնք գործնականում բացակայում են այսօր: Ելույթ ունեցան նաև ակադեմիկոս Ա. Սաղյանը, կ.գ.թ. Ա. Հովհաննիսյանը, բ.գ.դ. Ռ. Հովհաննեսյանը, ովքեր նշեցին, որ նախատեսված աշխատանքը արդիական է մեր հանրապետության համար և ուսումնասիրությունների արդյունքները կարող են հիմք ծառայել մեր երկրում դեղատնային գործունեության կատարելագործման նոր մեխանիզմների, ինչպես նաև՝ նոր օրենսդրական ակտերի մշակմանը:

Որոշեցին՝

1. Հաստատել Անուշ Արմենի Ոսկանյանի՝ ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ և «Հայաստանի Հանրապետությունում դեղատնային գործունեության կատարելագործման մեխանիզմների գիտական հիմնավորումների մշակումը» ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ:
2. Ատենախոսական աշխատանքի գիտական ղեկավար հաստատել դ.գ.թ. Ա. Սահակյանին:
2. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտից լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակիցների առաջադրման հարցը:

Լսեցին՝ Գիտական խորհրդի նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սաղյանը, ով տեղեկացրեց, որ նշված մրցույթին մասնակցելու համար հայտ է ներկայացրել մագիստրատուրայի ուսանողուհի Մոնիկա Հովսեփի Իսրայելյանը: Ելույթ ունեցան նաև գիտխորհրդի անդամներ բ.գ.դ. Ռ. Հովհաննեսյանը, կ.գ.թ.

Ա. Հովհաննիսյանը, ք.գ.թ. Ս. Վարդապետյանը և ք.գ.թ Ա. Մկրտչյանը, ովքեր նշեցին, որ Մոնիկա Իսրայելյանը ուսումնառության ընթացքում ցուցաբերել է գերազանց առաջադիմություն, ակտիվորեն մասնակցել է ուսանողական միջոցառումներին: Վերջին երկու տարում մասնակցել է նաև հանրապետական գիտաթժշկական գրադարանի կողմից կազմակերպվող ամենամյա «Կվոդլիբեթին»՝ 2020 - 2021 ուս. տարում զբաղեցնելով առաջին պատվավոր հորիզոնականը, ունի տպագրված մեկ հոդված՝ Հայաստանի քիմիական հանդեսում:

Որոշեցին՝ (միաձայն) առաջադրել Մոնիկա Հովսեփի Իսրայելյանի թեկնածությունը՝ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակցելու համար:

3 Ընթացիկ հարցեր:

Նիստի ընթացքում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ, պրոֆ.

Ա. Սադյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա. Դադայան